

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material






Գ. Վ. ՊԼԵՆԱՐՈՒԹ

01 JUL 2009

ԿՐԵԱԼԻԳՈՒՄԻՑ
ԴԵՊԻ
ՄԱՏԵՐԻԱԼԻԳՈՒՄ

239
=



ՊԵՏՐՈՍ

1931

ՏԵՐԵՎՈՅ

ԼԱ 3590-55
 ա-66
 բայկութերի
 շնոր մասքեր
 լիցի
 Te-6550 31/180
 2e-3014 19/180
 2e-20092 28/180
 Te-9213 21/11.81

1M
 Պ-68
 ՄՎ

Գ. գ. ԳԼԵԽԱՆՈՒԹԻՒՆ

Ի Դ Ե Ա Լ Ի Զ Մ Ի Ց
Գ Ե Պ Ի
Մ Ա Տ Ե Ր Ե Ա Լ Ի Զ Մ

Թարգմ. Ա.Ա.Քել, Ա.Ա.Քելչյան

1780

22-022F

ԳԵՏՐԱՍ



ՅԵՐԵՎԱՆ

(ՀԵԳԵԼ ՅԵՎ ԶԵԽԾԱՊԱՄՑՆԵ ՀԵԶԵԼԾՈՒՆԵԲԸ. ԴԱՎԻԴ-ԹՐԻԴՐԻՄ ՇՏՐՈՋԻ:
ԲԲՈՒՆ ՅԵՎ ԵԳԻԱՐ ԲԱՋԻԵՐՆԵԲ ՅԵՂԲԱՑՐՆԵԲԸ. ՓԵՑԵՐՐՈՒԿ)

Գերմանական իդեալիստական փիլիսոփայությունը շատ կարևոր դեր է խազացել XIX դարի գիտության զարգացման պատմության մեջ: Նրա ազգեցությունը մեծ և լաղել նույնիսկ բնագիտության վրա: Բայց նրա ազգեցությունն անհամատ ավելի ուժեղ է լեզել այն «գիտացիպիհների» վրա, վորոնց ընդունված և մրաննիւում անվանել բարոյական ու քաղաքական գիտություններ: Գերմանական իդեալիստական փիլիսոփայության ազգեցությունն ալսուել ոլեածք և վճռական համարել այս բառի կատարյալ իմաստով: Նա հարուցել է և մասամբ լուծել այնպիսի հարցեր, վորոնց լուծումն անպայման անհրաժեշտ և հասարակական զարգացման պրոցեսի գիտական հետազոտությունը հնարավոր գարձնելու համար: Վորովսո որինակ բավական և մատնանշելու թե Շելլինդն ինչպես և լուծում ազատության և անհրաժեշտության հարաբերության հարցը (յուր System des transzendentalen Idealismus-ում, Tübingen, 1800) Բայց: Շելլինդը նախակարասութեան երմիան: յուր ամենալիակատար արտահայտչին գերմանական իդեալիզմը գտավ հանձին Գեորգ Գիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի:

Միանգամայն բնական և, վոր Հեգելի ազգեցությունն ամենից ավելի արտահայտվեց յուր հայրենիքում, Գերմանիայում: Իսկ Գերմանիայից հետո չե լեզել մի ւերկեր, վորի վրա նա այնքան ուժեղ ազգեցություն թողած լիներ, ինչպես Թուսաստանի վրա:

Առանց պարզելու Հեգելի ու Ֆելիքսախի փիլիսոփայության գլխավորագույն գծերը, անկարելի յե ըմբռնել XIX դարի արեվմբտա-լեվոպական փիլիսոփայության և արևմտա-լեվոպական

*) Հանրածանոթ իրողություն և Հեգելի ու Ֆելիքսախի հաջորդական ազգեցությունը Բելինսկու վրա, Ֆելիքսախինը՝ Զերնիշեվսկու վրա, վորը հագրգում եր, թե յերիտասարդ ժամանակ Ֆելիքսախից անզիք գիտեր ամբողջ յերեսներ:

Պետրանի տպարան
Գրավիլա № 1349(թ)
Պատվիր № 6559
Հրատ. № 721
Տիրած 2000



3590-55

հասարակական մտքի պատմությունը։ Այդ ինքնին հասկանալի յի։ Բայց առաջին հայացքից շատ ավելի պակաս հասկանալի յի յիրեռմ այն անժխտելի հանգամանքը, վոր յուր ժամանակին հենց այս վոչ ուսու մտածողներին են ստիլված յեզել դիմել այն ուսու մտածողները, վորոնք, ձգտում ենին լուծել թվում եր թե, զուտ ուսական հարցեր։ Հույս ունեմ, վոր հետագա շարադրանքը ցուց կտա, թե այս հանգամանքի մեջ իսկապես զարմանալու ուղղակի վոշինչ չկա։ Յես առայժմ կահճանափակվիմ համառոտակի նկատիլով, վոր ամբողջ խնդիրն այսուեղ կայանում և Հեղինի ու Յերեքավի փիլիսոփայական սփստեների գիտական բնույթի մեջ։ Ահա հենց այդ բնույթին ել պետք է մատնանշեր, հասկանալի պատճառվ, սկսելով նախ և առաջ, Հեղինից։

I

Յերր Ն. Գ. Զերնիշևկուն զրական ասպարեզից բանությամբ քենուց հետո մեր առաջավոր շրջաններում տարածվեց արհամարտկան վերաբերմունք դեպի զերմանական «մետաֆիզիկան», մեղ մոտ սկսեցին Հեղինի վրա նայել զորպես, գերազանցորդն պահպանողական—յեթի վրա բերակցիոն—մուտողի վրա։ Դա ահագին սիրալ եր։ Անհերքի յի, վոր նա յուր կյանքի վերջին չեղել այն, ինչ նա չեղել եր առաջ։ Յերիտասարդ հասակում նա, Շնորհին հետ, Թուուրինգինի մոտ, մարդագետնի վրա անկում եր աղատության ծառը և յուր ալբոմի թերթերը լցնում „vive la liberté!“, „vive Jean Jeaques“ և այն բացականչություններով։ Իս յուր կյանքի վերջին որերին, այն պահուն, յերր նա աղիտառում եր յուր „Philosophie des Rechts“-ի վրա, նա իրոք (Քեմենկին լավ եր ըմբռնել այդ ժամանակված Հեղինին) պատրաստ եր քարողել փիլիսոփայական «հաշտություն իրականության հետ»։ Բայց հեղելյան սիստեմի գլխավոր հատկանիշը բնավ այն չե, վոր նրա սահեղագործողը յուր տեսական նախադրյալներից գործնական պահպանողական յեղակացություններ և արել զառամելալ հասակում։ Սլյդ սիստեմը զրավում է փիլիսոփայական մտքի պատճմության մեջ ամենատառաջին տեղերից մեկը, — յեթի վոչ ամենաառաջին տեղը, — բնավ վոչ այն պատճառով, վոր նա հանգել եր վորեւ, առանձնապես զնահատելի, զործնական յեղակացության, այլ այն պատճառով, վոր նա հասաւատել և մի քանի տեսական դրություններ, վորոնք այնպիսի խոշոր կարևորություն ունեն, վոր նրանց յուրացնելն անհրաժեշտ և վոչ միայն աշխարհի վրա

տեսական ուղիղ հայացք մշակելու ձգտումն ունեցող մտածողի այլ և ամեն մի պրակտիկ զործչի համար, վորը գիտակցաբար ձգտում և վերակառուցել իրեն ցըապատող հասարակակարգը։ Հեղեղն ինքն և ասեւ, թե փիլիսոփայության մեջ զլխավորը վոչ թե հետեվանք ներն են, ալսինքն այս կամ այն առանձին յեղակացությունները, այլ՝ մերով։ Յեվ հենց մեթոդի տեսակետից պետք և նախ և առաջ նախելու նրա փիլիսոփայության վրա։

Հայտնի յե, վոր յուր մեթոդը դիալիկտիկական եր անվանում Հեղեղը ինչո՞ւ եր նա այդպես անվանում այն։

Յուր „Phenomenologie des Geistes“-ի (վորու ֆենոմենության) մեջ նա մարդկային կյանքը համեմատում և տրամախոսության հետ այն մտքով, վոր մեր հաւաքքները, կենսական փորձի աղբեցության տակ, աստիճանաբար փոփոխվում են, ճիշտ այն պես, ինչպես այդ տեղի ունի իրար հետ իստակցող անձերի կարծիքների վերաբերմամբ՝ հազերկան հարուստ բովանդակությունունեցող զրայցի ընթացքում։ Դիտակցության դարձացման ընթացքը համեմատենալով այդորինակ զրուցը ընթացքի հետ, Հեղեղը նրան տվեց դիալիկտիկական շարժում անունը։ Դիտակտիկա արտահայտությունը տակավին գործ եր ածել Պատառնը, բայց այդ արտահայտությունն առանձնապես խորունկ, կարևոր իմաստ և ստանում հենց Հեղեղի մոտ։ Դիտակտիկան նրա համար ամեն մի գիտական իմացության հոգին և Վերին աստիճանի կարեւոր և ըմբռնել այդ դիտակտիկայի բնությունը։ Նա ըսկը դրսունքն և ամեն մի շարժման, ամեն մի կյանքի, այն ամենի, ինչ վոր տեղի ունի իրականության մեջ։ Բովանդակ վախճանական յերեւությները, Հեղեղի տակով, վոչ միայն արտաքսատահամարակալական ամենը կարեւի թիւնում իրենց սեփական բնությունը։ Դրություն ունեցող ամեղով շեխարհը կարելի յե վերջնել վորպես որինակ դիալիկտիկայի բնությունը բացարելու համար։ Ամեն ինչ հասում և, ամեն ինչ փոխություն, ամեն ինչ վոչնչանում։ Դիտակտիկականի ուժը Հեղեղը հոմեմատում և աստվածալին ամենակարության մեջ կամ անուուր անանցանելի ուժն և, վորին չի կարող դիմանալ վոչ մի բան։ Յեվ դիտակտիկական, ընդ սմին, իրան զգալ և տախի կյանքի յուրաքանչյուր առանձին բնագավառի յուրաքանչյուր առանձին բնագավառի յուրաքանչյուր առանձին յեղակացությունները այս մեջ։ Վերցնենք շարժումը։ Շարժվող մարմինը տվյալ բովելին գտնը վում և աղյալ կեառմ, բայց միենուոյն բովելին նա գտնվում և

նաև ալդ կետից դուրս, վարովհետեւ յեթե նա գտնվելու լիներ միայն այդ կետում, ապա նա կմնար անօարձ: Ամեն մի շարժում դիալեկտիկական պրոցես և: Բայց մի շարժում և բնության վողջ կյանքը: Ռւսոյ բնությունն ուսումնասիրելիս անողայնան անհրաժեշտ է կանգնի դիալեկտիկական տեսակետի վրա: Հեգելը խստիվ դատապարտում այն բնագետներին, վորոնք մոռացության են տալիս այդ*): Բայց նա գլխավորապես կշտամբում եր նրանց այն բանի համար, վոր նրանք իրենց դասակարգությունների մեջ անանցանելի անզունդով իրարից բաժանում են այնպիսի բաներ, վորոնք իրապես փոխանցում են միմյանց՝ լինթարկվելով դիալեկտիկական շարժման անհաղթահարելի ուժին: Այն հաղթանակը, վոր բիոլոգիայի մեջ հետազոտմ ունեցավ տրանսֆորմիզմը, պարզ ցուց տվեց, վոր ալդ կշտամբանքն ունեցել ե տեսական շատ լրւջ հիմունք: Միանգաման նույնն են ցուց տալիս նաև մերաչքի առջև տեղի ունեցաղ ասլիցուցիչ գլուտերը քիմիայի մեջ: Այն ինչ անտարակուսելի իե, վոր բնության փիլիսոփալությունը Հեգելի սիստեմի ամենաթուլ կողմն ե: Հեգելն անհամենատ ուժեղ ե «արամարանության», «փիլիսոփալության պատմության» և ընդհանրապես հասարակական կյանքի փիլիսոփալության, ինչպես և «վոգու փիլիսոփայության» մեջ: Հեց այսուղ ել նա առանձնապես բարերար աղղեցություն և ունեցել XIX դարի հասարակական մոքի դրդացման վրա:

Սակայն հարկավոր ե նկատել հետեւալը: Հեգելի տեսակետը յեղել ե զարգացման տեսակետ: Բայց կարելի լի զարդացումը տարբեր հասկանալ: Այժմ ել կան դեռևս բնագետներ, վորոնք հանդիսավոր կերպով կրկնում են՝ «բնությունը թոփքներ շի առում»: Հաճախ նույնը կրկնում են և սոցիոլոգները՝ հասարակական զարգացումը տեղի լի ունենում գանգազ, աստիճանական փոփոխությունների ճանապարհով: Հեգելն, ընդհակառակը, պրոպում եր, թե բոլիչներն անխռառափելի լին ինչպես բնության, նույնապես և պատմության մեջ: «Կեցության փոփոխություններն», — առում ե նա՝ «կաղմում են վոչ միայն այն, վոր մի քանակություն դառնում և մի այլ քանակություն, այլ և այն, վոր վորակը զառնում և քանակը, և ընդհակառակը. այս վերջին տեսակի անցումներից ամեն մեկն աստիճանականության ընդհանում և (լու Աբեր-

*). Բայց վորում նրա որով նրանք ամենքը զբեթե մոռացել ելի՞ն այդ:

chen des Allmählichen) և յերեւյթին տռիս և մի նոր կերպարանք, վարը վորակով տարբեր և առաջվանից: Ալապես, «բինակը՝ ջուրը սառչելիս աստիճանարար չե պնդանում...», այլ սիանդամից, արդեն սառուցման կետին հասնելով, նա մնում և հեղուկ լինե միայն պահպանում և հանգիստ կացություն և այն ժամանակ ըստական և ամենափոքր հրումն, վորպեսզի նա հանկարծ պնդանա»: Զարդացումը հասկանալի յև դառնում միայն այն ժամանակ, յերբ աստիճանական փոփոխությունները քննում ենք վորպես մի պրոցես, վորով նախալարաստվում և նորից ծնունդ և առնում թափչը (կամ թափչքները): Ով կամենում և տվյալ յերեւյթի ծագումը բացատրել միմիայն դանդաղ փոփոխություններով, նա խկացես անդիտակցաբար լինթագրում և, վոր նա արդեն զոյտըուն ունի, բայց մնում ե աննկատելի ընորին յուր չափանց փոքր չափերի: Սակայն ալդ իր բացատրության հետեւ վրա ամենքով ծագման գաղափարը փոխարինվում և անման, մեծության հասարակ փոփոխության գաղափարներով, այսինքն քայհաճորեն վտարվում և հենց այն, ինչ վոր հարկավոր եր բացատրել:*) Հայտնի յե, վոր այժմյան բիոլոգիան միանգամայն ընդհանում և «աստիճանականության» ընդհանատումների նշանակությունը բուսական և կենդանական տեսակների զարդացման պրոցեսի մեջ»:

Հեգելը յեղել ե բացարձակ իդեալիստ: Բայտ նրա ուսմունքի համաշխարհակին զարգացման պրոցեսի շարժիչ ուժը, վերջին հաշվով հանգիստանում և բացարձակ գաղափարի ուժը: Դա, իհարեկ, մի ըստ ամենայնի կամայական և, կարելի լի ասել փանտաստիկ լինթագրությունները Հետագայւամ Տրենդիլենբուրգը յուր «Logischen Untersuchungen»-ի մեջ հեշտությամբ ցուց տվեց, վոր գաղափարին դիմելն իրապես վոչ մի ժամանակ և վոչ մի բան չի բացատրում: Բայց ինչպես ասել եմ մի ուրիշ տեղ, Տրենդիլենբուրգը լուր հարփածներն ուզզելով դիալեկտիկայի դիմ իսկապես նրա իդեալիստական հիմքին և միայն դիպչում:**) Տրենդիլենբուրգն իրավացի յեր միանգամայն, յերը մեղաղբում եր Հեգելի դիալեկտիկան, վոր նա «հաստատում և զուտ մտքի ինքնակամայական շարժումը, վորպիսի միաքը հանգիստանում և միենույն ժամ-

*) Wissenschaft der Logik Nurenberg, էջ 313, 314.

**) Տես Ենգելսի «Հյուզեգի Ֆեյբբախ» ըրոշուրի թարգմանության տուաջաբանը:

հանակ կեցության ինքնածնությունը»: Բայց այդ հաստատումը վոչ թե ամեն մի գիտելիությամբ բնությունն և ընդհանրապես, այլ միայն իդեալիստական գիտելիությամբ թերությունը: Այդ թերությունը վերացրեց մատերիալիստ Մարքուը և Տրենդելին բուրգակի առարկություններն ընդդեմ գիտելիությամբ այժմ կորցրել են ամեն մի կշիռ: Բայց ինքը Մարքուը, նախքան մատերիալիստ գտնալով, չեղել և չեղելի հետեւորդ»:

II

Հեգելը սխալվում եր վորպիս իդեալիստ, այսինքն վորչափով վոր նա գաղափարի ուժը համարում եր համաշխարհային պրոցեսի շարժիչ ուժ: Բայց նա իրավացի լեր վորպիս վիճելիք, այսինքն ինչ չափով նա բոլոր յերևույթների վրա նալում եր նրանց զարդացման տեսակետից: Այդ յերեսույթների վրա նալում ե նրանց զարգացման տեսակետից, նա հրաժարվում է նրանց նը-կատամար կիրառել այս կամ այն գիրացական սկզբունքի չափը: Իտ մեզ մոռ հիմնալի պարզաբանել ե Զերնիշնիկովին: «Ամեն բան կախ ված և հանգամանքներից, տեղի ու ժամանակի պայմաններից», զրում եր նա յուր «Ռուսաց գրականության Դոգութան շրջանի ուրվագծերում», յերեսույթների նկատմամբ կիրառելիք գիտելիութիւնական հայացքի գլխավոր հատկանշական գիծը ընորոշելիս: Այդ հայացքն առանձնապես արդյունավետ և յողի հրապարակախռության և հասարակական գիտությունների մեջ, վորոնց ընտագավորում սովորություն եր դարձել զատավճիռներ կարդալ յերեվույթների մասին հենվերսի այս կամ այն վերացական, միանգում ընդմիշտ ընդունված սկզբունքին. իդուր չե, վոր քրանսիացիներն այս գիտությունների անունը դրել են „Sciences morales et politiques“ (բարոյական և քաղաքական գիտություններ): «Զետ վերացական ճշմարտություն, ճշմարտությունը միշտ կոնկրետ հարաբեկում եր Զերնիշնիկովին նույն ուրվագծի մեջ: — Յեզ իրեն որինակ նա նշում եր, ի միջի ալլոց, պատերազմը. «պատերազմը կործանարար ե, թէ արգասավետ»: Ընդհանրապես, վճռականորեն չի կարելի առաջ զրա պատասխանը, հարկավոր և իմաստ, թէ ինչ պատերազմի մասին և խոսքը: Պատերազմը կրթված ժողովուրդներին բերում և պակաս սոցուու և ավելի վաս: Բայց... 1812թվի պատերազմն ուսւ ժաղավրդի համար յեղել և փրկարար: Մուրաթոնի նակատամարտը մարդկային պատմության մեջ ամենաբարերար դեպքն և յեղել: Այդ ճիշտ ե: Բայց յեթի այդ ճիշտ ե, ապա անխմատ և դառնում այն

հարցը, թէ հատկապես, վոր սոցիալ-քաղաքական կարգը պիտք է լավագույնը ճանաչվի. չե՞ վոր այստեղ ել ամեն բան կախված է հանդամանքներից, ժամանակի ու տեղի պրյամաններից: Այսպիսով Հեգելի գիլիստիայությունն անողոք կերպով դատապարտում եր ուսուովովմը: Հեգելի աշակերտ՝ հավատարին մնալով իր ուսուցչի մեթոդին, կարող եր սոցիալիստ դառնալ միայն այն գեղքում, յերբ ժամանակակից անտեսակարգի գիտական հետազոտությունը նրան բերեր այն յեղակացության, թէ նրան ներքին որինաչափ զարգացումը տանում է գեղի սոցիալիստական կարգի ծագումը: Սոցիալիզմը պետք է զիտություն գտնալու կամ զարգարեր գոյություն ունենալուց: Ուստի հասկանալի յե, թէ ինչու գիտական սոցիալիզմի հիմնագիրները, Մարքուն ու Ենգելը, գուրս յեկան հենց Հեգելի գորոցից:

Վերցնենք մի այլ որինակ: Ժ. Սեյն անողուտ հայտարարից քաղաքատնախության պատմության ուսումնամիջությունն այն հիման վրա, վոր մինչեւ Արամ Սմիտը—վորի հետեւողուն եր նա համարում իրան թյուրիմացարար—բոլոր անտեսագնաները ունեցել են սխալ հայացքներ: Հեգելը, ժ. Բ. Սեյի ժամանակակիցը, բոլորովին այլ կիրազ եր նախում գիլիստիայության պատմության վրա: Նրա աչքում գիլիստիայությունը յեղել և վորու ինքանանաշությունը: Վորովհետեւ վորին ընթանում է առաջ, վորովհետեւ նա զարգանում և մարդկության զարգացման ընթացքի հետ միասին, ապա գիլիստիայությունն ել կանգնած չի լինում մինույն տեղում: Յուրաքանչյուր, ներկայումս «գերազանցված» գիլիստիայական սիստեմ հանդիսացել է իր ժամանակի մտալոր արտահայտությունը (seine Zeit in Gedanken erfasst) և գրանունն ենրա հարաբերական արդարացումը: Բայց դրանից ըստ «ժամանակի վերջին գիլիստիայությունների և դրա համար նա պետք է պարփակի իր մեջ նրանց բոլորի սկզբունքները»*):

Փիլիստիագության պատմության վրա արդախի հայացք ունենալու պարագայում միայն նա կարող եր զառնալ գիտական, ուշագիր ուսումնամիջության առարկա: Յեզ թեսկետ անհիմն չեր Հեգելի նմանամիջ առաջարած մեղադրանքը, թէ նա ժամանակ առ ժամանակ բավական անթուլպարելի կերպով եր վարդում պատմական սովորելով նրանց իր սիփական

* Encyclopädie der philosophischen Wissenschaften, § 13.

Փիլիսոփայական սիստեմի պետքերի համեմատ *), սակայն և այնպիս տարակութից դուրս է, վոր Նրա „Vorlesungen über die Geschichte der Philosophie“-ն մինչև այժմ ներկայացնում է փիլիսոփայության լավագույն պատմությունը, այսինքն ամենառաջանելին, վորն ամենապայծառ լույս և սիրում տարբեր Փիլիսոփայական ուսմունքների տեսական բովանդակության վրա:

Հեղելը նույն դիալեկտիկական տեսակետից եր նայում իրավունքի, բարոյականության, արվեստի, կրոնի վրա Յեզ այս բուլը «Ղիսցիպինսկը» կա ուսումնախում եր փոխադարձ կապակցությամբ: Նա ուսուցանում եր, վոր «Ճիշճն տվյալ կրոնի ժամանակ կարող և զոյսթուն ունենալ պետական կառուցվածքի տվյալ ձևը, միայն տվյալ պետական կառուցվածքի որով հայրավոր և տվյալ փիլիսոփայության և տվյալ արվեստի գոյությունը» **): Յերբեմն բավական մակերևույթորեն և մեկնարանվում այդ հայացքը ասում են, թե հասարակական կյանքի բազմաթիվ կողմերից լուրաքանչյուրն ազդում և մնացած բոլորի վրա և, իր հերթին, իր վրա կրում մնացած բոլորի ազդեցությունը: Դա — հասարակական յերեսոյթների փոխազդեցության հայտնի ուսմունքն եւ Բայց թեպես և Հեղելը ընդունում եր այս ուսմունքը, սակայն և այնպես նա կարծում եր, վոր չի կարելի կանգ առնել նրա վեա:

«Յերեսոյթը փոխազդեցության տեսակետից քննելու լիդանակի անբարարությունը նրա մեջ և, — ասում է Հեղելը — վոր փոխազդեցության հարաբերությունը հասկացողության համարժեք ծառայելու փոխարեն զերս ինքը պետք և հասկացվի»: Այս թե ինչ և նշանակում ալդ: Յեթե ինձ հաջողվեց հայտնագործել, վոր ավյալ յերկրի պետական կառուցվածքն աղդում և նրա կրոնի վրա, իսկ նրա կրոնը՝ պետական կառուցվածքի, ապա հասկանալի ին, վոր իմ հայտնագործությունն ինձ առաջի և իր բաժին ողուար՝ սակայն նա զերս ամենակին չի բացատրում, թե վթրտեղից յերեան լիկան այդ փոխազդող յերեսոյթները՝ տվյալ պետական կառուցվածքը և տվյալ կրօնը: Այս հարցը լուծելու համար լիս պետք և ավելի խորանամ յերեսոյթի մեջ և, չբավականալով կրօնի ու պետական կառուցվածքի միջև յեղած փոխազդեցությամբ, պետք և աշխատեմ յերեվան հանել այն բնդիանուր նիմքը, վորի վրա

*) Ներքեւում կտեսնեմ, թե ինչն եր հայտնապես նրան այս հանցանքի մէջ ձգում:

**) Philosophie der Geschichte, dritte Auflage, Einleitung, եջ 68:

համազում են քե պետական կառուցվածքը յեվ քե կրոնը: Հեղելը հիանալի արտահայտել ե այդ, յերբ ասել ե, թե «պատճառը վոչ միայն զործողություն ունի, զործողության մեջ նա, վորպիս պատճառ, հարաբերության մեջ և մասում ինքն իր հետ» *), վոր փոխազդող կողմերը չեն կարող ընդունվել վորպիս անմիջական տվյալներ, այլ պետք և ըմբռնվեն վորպիս ինչ վոր յերբորդի, «բարձրագույնի» մամենաներ:

Այս պահանջը խիստ կարենք եր մեթոդաբանական տեսակետից, վորովհետեւ գրդել ե վորոնել այն արմատական սխանառը, վորը, վերջին համալի, առաջ և թիրում մարդկության պատճական շարժումը: Այդ շարժման հիմնական պատճառն ինքը Հեղելը, վորովս իդեալիստ, համարում եր համաշխարհային վորին: Պատճառթյունը վոչ այլ ինչ և, բայց յեթե նրա «շարադրանքն ու իրականացումը», այսինքն ավելի պարզ ասած՝ շարժում: Այս շարժումը կատարվում և աստիճան առ աստիճան: Յուրաքանչյուր առանձին աստիճանն ունի իր ուրույն սկզբունքը, վորի կողմը տվյալ դարաշրջանում մի հայտնի ժողովուրդ եւ վորը այդ դեպքում կարծեն թե հանգիստանում և ընտրյալ ժողովուրդ: Յեզ այդ ուրույն սկզբունքն ինքնին վորոշում և դարաշրջանի բովանդակությունն: «Ժողովրդական վողու հատկություններով, — ասում է Հեղելը, — կոնկրետ արտահայտում են յուրաքանչյուր տվյալ ժողովրդի զիտակցության ու կամքի բոլոր կողմերը, նրա բովանդակի իրականությունը: Նրանք իրենց գրոշմը զնում են նրա կրօնի, նրա բաղաքական կարգի, նրա բարոյականության, նրա իրավունքի, նրա սովորույթի, նույնապես և նրա զիտության, նրա արվեստի, նրա տեխնիկայի վրա: Այս բոլոր մասնավոր հատկությունները բացատրվում են ժողովրդական վագու ընդհանուր հատկություններով, ինչպես և ընդհակառակը — այդ ընդհանուր հատկությունները կարելի յե մակարերել պատճության ուսումնասիրության լին թական՝ ժողովրդական կինցաղի փաստական մասնավոր յերեսոյթներից: **)

Հայտնի ին, վոր ժողովրդական վողու հատկություններին դիմելը հաճախակի ի չարն են զործադրել հասարակական դիտության և հրավարակախոսության մեջ: Բայց ամեն մի տվյալ թիս-

*) Wissenschaft der Logik. Zweites Buch dritter Abschnitt. «die Wechselwirkung»

**) Philosophie der Geschichte, Einleitung: Հոմեմատ. եջ 79, նույնպես Գրանդլին. der Philosophie des Rechts, պարագափներ 344, 352:

Բիա կարելի յե ի չարը գործադրեւ մանափանդ այն ժամանակ, յերբ արդեն անցնում է նրա դարը: ինքնըստինքան այն ուսումնքը, թե տղյալ ժողովրդի վողինս ունինրա զարգացման տրվյալ աստիճանի վրա ուղուցն հատկություններ, քնակ ել աշնպիս սխալ չե, ինչպիս դա կարելի յե կարծել ազգայնականներից վումանց դատողությունները կարդալիս: Ամենավորը տարակույս անգամ չի, վոր «հասարակական մարդ» ոժաված և վորոշ հոգերանությամբ, վորի հատկություններով վորոշվում են նրա ըստաղջած բոլոր գաղափարախոսությունները: Նրա այդ հոգերանությունը կարելի յե, անվանել ինթե կուգեք, նրա վորին: Հասկանալի բան ե, վոր անհրաժեշտ և միշտ հշենք վոր հասարակական մարդու հոգերանությունը զարգանում ե, այսինքն վորին: Բայց Հեգելը լավ գիտեր այդ: Բացի վրանից հարկավոր և նկատի ունենալ, վոր հասարակական մարդու հոգերանությունը չի բացարձում նրա պատմական շարժումը, այլ նա ինքն և վեցինով բացարձում: Բայց այստեղ Հեգելի մոտ հակառակ եր դուքս զարմություն մի ավագալ վորով եր բացարձում նրա պատմական հակառակի, ինչպիս և նրա ամբողջ իշականությունը, այսինքն նրա բովանդակ հասարակական կենցարքը: Դա սկազ ե: Միանդաման հասկանալի յե այդ սխալի ծագումը: Հեգելը, վորպես իդեալիստ, համոզված եր, վոր կեցությունը վորոշվում և զիակցությամբ, և վոչ թե ընդհակառակը: Այս իդեալիստական ընդհանուր հայցը կիրառեցեք պատմության նկատմամբ և գուրս կդա, վոր հասարակական կեցությունը վորոշվում և հասարակական գիտակցությամբ, — կամ ինթե գերազանցում եք այսպիս արտահայտվել ժողովրդական վորով: Հենց զրա համար ել Հեգելին ասում եր, թե ամեն մի տվյալ ժողովրդի վորով վորոշվում և, — նկատեցեք, սական, միայն վերջին ինսանցիալում, — վոչ միայն նրա արքուուր, նրա կրոնը և նրա փիլիսոփակությունը, այսինքն վոչ միայն նրա գողափարախոսությունների ամբողջ միասնությունը, այլ և նրա քաղաքական կարգը և նույն իսկ նրա ուեխնիկան և նրա հաստրական հարաբերությունների ամբողջ միասնությունը, այլ և նրա սեփական նկատման մեջ միայն այս ժամանակական կամ ժամանակական հարաբերությունների ամբողջ միասնությունը: Երա միաւլ նկատմանց միայն այն ժամանակ, ինը ակներեւ զարձակ նրա փիլիսոփայության ընդհանուրը (իդեալիստական) հիմունքի սնանկությունը — այն ել վոչ մի անգամից: Համաշխարհային վորու զարգացման յուրաքանչյուր տարիները պատմական թատերաբեմի վրա ներկայացուցիչն ունի մի առանձին ժողովրդ: Այնու պատմական դարաշրջանի գերանական կուլտուրովի զարարը

ջանն և Հեգելի ուսմունքի համաձայն համաշխարհային վորու զարդացման ամենաբարձր աստիճանը ներկայացնող ժողովուրդն իրավունք ունի մյուս ժողովուրդների վրա նաև լուսական նպատական նպատակներին հասնելու հասարակ գործիքների վրա: Սա պետք է նկատել: Յեթե գերմանացիներն այժմ պարտիածների հետ սանձարձակ են վարդում, ապա, դժբախտաբար, զրա մեջ կա Հեգելյան մեղրի մի կաթիւ:

Բայց սլավոնական ժողովուրդներն, իհարկե, չեզին կարող հաճությամբ ճանաչել գերմանական հեգեմոնիան: Տակավին Շելլինգի որերից ի վեր սլավոնական յերկրներում ինտելիգենցիայի մի մասը ջանասիրությամբ զբաղվում եր այն հարցով, թե այդ ժողովուրդներին համաշխարհային վորու զարգացման վար աստիճանն և վիճակիամ ներկայացնել:

Վերևում յես ասացի, վոր հաճախ Հեգելին կշատմբում եցին, վոր նա իսկեր իր սիսեմի շահերի քամահաճորեն և դասավորվել թե պատմական և թե ալլի վաստերը: Այժմ յես ավելացնում եմ, վոր նա, իրեալիստ մնալով, չեր ել կարող բոլորովին հրաժարվել վորու կամայականությունից, ինըր գործ եր ունենում վաստական տըզվաների հետ: Բայց նա, այնուամենայնիվ, իդեալիստական սիստեմների այլ կառուցողներից պահանձնից և այդ բանին: Հատեսն սիստեմների այլ կառուցողներից պահանձնից և այդ անում, և յերբ նա անում եր այդ, նրա մեջ բնավ չի ինել կոնկրետ պատմական հողի վրա: *) Ընդհակառակը, նա հաճախ եր այդ անում, և յերբ նա անում եր այդ, նրա վիլխուփայական-պատմական նկատմառությունը պայծառ լույս եցին սիստեմ մարդկության պատմական զարգացման բազմաթիվ կարեւոր հարցերի վրա: Այ, որինակ, Սպարտակի անկման մասին իսասելիս նա չի բավականուում այն ամենով, ինչ կարելի յենրա մասին ասել, մնալով «համաշխարհային վորու» տեսակետի վրա, այլ նրա պատմառը վորուում և գուլքերի անհավասարության մեջ (ungleicheit des Besitzes): Գուլքացին անհավասարության անումով և նա բացարարում և պետուրյան ծագումը, իսկ ամուսնության պատմական հիմք այս բացարձակ սիլեալիստը՝ համարու եր յերկրագործուրյունը: Հեգելը սիրում եր կրկներ թե յերբ ի մոտո քննում ես իդեալիզմը, զուրս և զալիս, վոր նա մատերիալիզմի ճշմարտությունն ե: Հենց նոր բերված որինակները՝ իսկ

*) Նրա սեփական արտահայտությունն ե:

Ինձ համար հեշտ ե դրանց թիվն ավելացնել — համոզիչ կերպով ցույց են տալիս, վոր խսկապես, յեթե մոտիկից քննելու լինենք, նրա սեփական պատմափիլիսոփայության մեջ դուրս եր գալիս հակառակը — մատերիալիզմը դուրս եր գալիս իդեալիզմի նօմարտություն։¹⁾ Այս հանգամանքը կարևոր նշանակություն կոտանամք աչքում, յեթե մտարերենք, վոր հնոտագայում պատմական մատերիալիզմի թեորիայի հիմնագիրներ հանդիսացան Մարքոն ու Ենգելսը, վորոնք սկզբում լեզել են նեղելյաներ։

III

Ով հասարակական հարաբերությունների վրա նայում է նրանց զարգացման ակտակետից, նա չի կարող անհարժորակ պաշտպան լինել։

Հերցինը՝ ծանոթանալով Հեգելի փիլիսոփայությանը վերջինս անպահնեց նեղափակության հանրահամեմիւ, Յեթե այդպիսի դնահատականը գերծ չեր վորոշ չափաղանցությունից, բայց և անպես անհիմնի ին, վոր քանի դեռ Հեգելը հավատարիմ եր մնում իր հզոր գիտականության մեթոդին, նա կողմնակից եր առաջազդեց շարժման։ Փիլիսոփայության պատմությանը նվիրված իր գասահոսությունները միրջացնելիս նա տում եր, թե համաշխարհական վոգին յերբեք կանգ չի տոնում մինուուն ակնում, վորովհետև հենց գեղ առաջ շարժվելու և կազմում նրա ինտիմ ընությունը։ «Յերբենի թվում ե, — տում եր Հեգելը, — թե համաշխարհական վոգին կանգ ե տոնում, թե նա կորցնում ե իր մշտընշենական ձգտումը դեպի ինքնաճանաչումն։ Բայց այդ միայն թը վում և այդպես իսկապէս, նրա մեջ այդ ժամանակաշրջանում տեղի ին ունենում մի ներքին խորունկ աշխատանք, վորն անսկատելի ին մինչ այն ժամանակ, քանի դեռ չեն հայտնաբերվել այն հնուանքները, վորոնց հասել ե նա քանի գեր չի փըրգել հնացած հայցըների կեղեց և նա ինքը, յերիտասարդանալով, առաջ չի մզկել յոթմզոնյան քայլերով։ Համեմաը դիմելով իր նոր վորուն բացականչում ե, «Ստորերկբյա խորոշ, զու վորում ես հիմնամի»։ Նույնը կարելի յե ասել և համաշխարհային վոգու մասին։ «Նա վորում ե հիմնալի»։²⁾

1) Այդ մասին յես ամելի մանրամասն խոսել եմ իմ «Կրիտիկա համարական կրիտիկա» ժողովածուի մեջ (Ծոճ 1906) «Հեգելի մահվան վաթունամերկի շուրջը» հոդվածում։

2) Vorlesungen über die Geschichte der Philosophie. համ. III էջ 685.

Ինչ կամենում եք անվանեցեք այս ուսմունքը, բայց նա գոյություն ունեցող իրակարգը պահպանողի փիլիսոփայություն չե

ինչպես հայտնի յե։ Հեգելին կշամքում եյին կոնսերվատիզմի համար, վորովհետև նա ազդարարել եր բանականի ու իրականի նույնությունը։ Սակայն, ինքնարափենքան, այն խոսեր, թե «Ինչ իրական ե, այն բանական ե, ինչ բանական ե, այն՝ իրական» (Was wirklich ist, das ist vernünftig, was vernünftig ist, das ist wirklich) բնավ ապացույց չեն, թե Հեգելը պատրաստ և հաշավելու ամյալ ամեն աեսակ հասարակակարգի կամ թեկող հենց ամեն մի տվյալ հասարակական հիմնարկի հետ։ Դրանում համոզվելու համար բավական կլիներ մտարերել, թե ինչպես եր նա վերաբերվում հոր չափաղանց իշխանության՝ նովմեյական ընտանիքում։ Հատ Հեգելի՝ ամեն գոյություն ունեցող յերեւլիթ տակավին իրական չե։ Այդպիս ել ասում եր նո։ «Իրականությունը բարձր ե գոյությունից» (der Wirklichkeit steht höher, als die Existenz)։ Իրականն անհամեծ ե։ Այն ինչ ամենեին ել անհրաժեշտ չե այն ամենը, ինչ վոր գոյություն ունի։ Համաշխարհական վագին, ինչպես մեղ հայտնի յե, կանգնած չի միենույն տեղում։ Նրա մշտնջինական շարժումը նրա մնագագրում, աշխատանքը փոքր առ փոքր զրկում և ամյալ հասարակակարգը իր անհրաժեշտ բռվանգակաւթյունից, նրան գարձնում մի սնամեջ, իր ժամանակն անցկացրած ձև, ուստի անհրաժեշտ և զարձնում նրա փոխարինումը մի նոր հասարակակարգով։ Յեթե իրականը բանական ե, ապա անպայման հարկավոր ե հիշել, չե վոր բանականն ել իրական ե։ Խոկ յեթե բանականին-իրական ե, ապա զրանից հետեւում ե, վոր չիս և չի կարող լինել մի ինստանցիա, վորն ընդունակ լինի կանոնացնելու նրա դիալեկտիկական առաջազետ շարժումը։ Առա զարք չեր Հեգելը սահմանում դիալեկտիկան վորպես համաշխարհային անհաղթելի մի ուժ, վորը պետք ե խորտակ նույն խոկ վողջ ամենակայունը։

IV

«Ամեն ինչ հոսում ե, ամեն ինչ փոփոխվում ! Զի կարելի յերկու անգամ վատք դնել միենույն վատկի մեջ և վոչ վոք յերկու անգամ չի մեռնիլ»։ Այսպիս եր ասում Յեփեսոսի խորունկ («Ճթին») մտածողը։ Յեկ միենույն միտքը — միայն կոփված անհամեմատ ավելի խիստ տրամարանության հնոցում — կազմում ե Հեգելի փիլիսոփայության հիմքը։ Բայց յեթե ամեն ինչ հոսում ե, ամեն ինչ

փոփոխվում, յեթե զիալեկակական շարժման հղոր ուժը չի խնայում՝ ամենակայուն լեռնութեարը, ապա վոչ մի հիմունք չունինք նրանց վորսե մեկի վրա նայելու միտիկայի տեսակետից: Բնդհուածեն, նրանք բոլորը կարող են և պետք է քննության առնը վեն միայն գիտության տեսակետից:

Հնմթերցողին հայտնի պետք ե լինի աստեղադարդ լերկնքի ու բարոյական որենքի այն հռչակավոր հակագրությունը, վոր արել և կանուը իր «Գործնական բանականության քննակատության» մեջ: «Աստեղազարդ յերկնքի հոյակապ տեսարանը կարծեն թե վոչնչացնում ե իմ նշանակությունը, հիշեցնելով ինձ իմ կախումը նշութական աշխարհից: Բնդհակառակը, բարոյական որենքի գիտակցությունն անհունորդն բարձրացնում ե իմ նշանակությունը՝ իմ առաջ բանալով մի կանք, վոր անկախ և անսահկանությունից և անգամ բովանդակ զգալական աշխարհից»:

Այսպիսով կանոի—ինչպես և Ֆիխտեի—համար բարոյական որենքը յեղել ե բանակի պես մի բան, վոր բաց ե անում դաները գեղի այն աշխարհը Հեղելը միանդամայն ալլ կերպ նայեց բարոյական որենքի վրա: Բարոյականությունը, համաձայն նրա ուսմունքի՝ ներկայացնում և հասարակական կյանքի անխուսափելի արդյունքը և անհրաժեշտ պայմանը: Հեղելը հիշեցնում և Արիստոտելի այն խոսքը, թե ժողովուրդն ամելի վաղ գոյություն ունի, քան առանձին մարդը: Առանձին մարդն ինքնուրույնությունից զուրկ մի բան և և զրա համար պետք ե գոյություն ունենա ամբողջի հետ միասնության մեջ: Բարոյական լինել, հօանական և ապրել բովանդակ յերկրի բարերեի համաձայն: Մարդուն լայլ գաստիարակելու համար նրան պետք ե դարձնել բարեկարգ պետության քաղաքացիի:*)

Բանից գուրս ե գալիս, վոր բարոյադիտություն արմատը քաղաքանության մեջ ե: Դա, ինչպես ջրի յերկու կաթիւ նման և բարոյականության այն հեղափոխական ուսմունքին, վոր մշակել են XVIII դարի ֆրանսիական լուսավորիչները: Բայց այդ նմանությունն ընդունակ ե տարակուանք հարուցանելու: Յեթե բարոյական լինել նշանակում ե ապրել իր յերկրի բարքերի համաձայն, ապա գրանով կարծես թե նախորոք գասապարտվում են նորացաներն, վորոնց գործունեյությունը մշտապես և անխուսափելուն նրանց դնում ե հակասության մեջ իրենց յերկրի այս, կամ այն բարեր ենք, այսինքն նրանց գարձնում և անբարոյական բարիս

*) Rechtsphilosophie § 153, ծանօթություն:

վորոշ իմաստով: Հենց անբառոյականության մեջ եր մեղադրում Արիստոֆանը Սոկրատեսին: Իսկ Սոկրատեսի մահը ցուց ե տալիս, վոր աթենական ժողովուրդը հիմնավոր գտավ այդ մեղադրանքը:

Սակայն զիալեկտիկական մեթոդի ոգնությամբ հեշտ ե լուծվում հակասությունը: Հեղելն իր «Պատմա-փիլիսոփայության» ներածության մեջ նկատում ե. «Ինչ վերաբերում ե առնասարակ բարոյական նպատակների ու հարաբերությունների անկման, իամատման և վոչնչացման, պետք ե ասել, վոր նրանք, իրենց ներքին եյությամբ անսահման ու մշտնշնական լինելով հանգերձ, սահմանափակված են իրենց արտաքին դրսելորության մեջ և ինթարկված բնության որենքներին, ինչպես և պատահականության ազգեցության: Այդ և պատճառը, վոր նրանք անցողական են, այդ և պատճառը, վոր նրանք իննթակա լին իամատման ու վոչնչացման»: Նույն տեղում Հեղելն արտահայտում ե մի միտք, վոր հետագալում կասալը զարգացրեց մանրամասնորեն իր „System der erworbenen Rechte“ աշխատության մեջ, «Համաշխարհային վորու իրավունքը բարձր ե բոլոր մասնավոր իրավունքներից» (Das Recht des Weltgeistes geht über alle besonderen Berechtigungen):

Մեծ անձնավորությունները, վորոնք պատմության մեջ հանդիս են յեկել վորպես «համաշխարհային վորու իրավունքի» կրողներ ու ջատագովներ, իրենց լիակատար աըդարացումը գտան հեգելյան պատմափիլիսոփայության մեջ, չնայած վոր նրանց յետությունները իամատել են մասնավոր իրավունքները և տատանել գոյություն ունեցող հասարակակարգը: Հեղելն արդարի անձնավորություններին անվանում եր հետամիեր, վորոնք իրենց գործունեյությամբ ստեղծում են նոր աշխարհ: «Նրանք», —ասում ե Հեղելը — «հակասության մեջ են ընկնում ինչն կարգերի հետ և խորակում նրանց, նրանք հանգիստանում են գոյություն ունեցող ուրենքները իամատողներ: Դրա համար նրանք կորստայն են մատնըգում, բայց մեռնում են վորպես առանձին անհատներ, նրանց պատիքը չի վոչնչացնում նրանց առաջադրած սկզբունքը..սկզբունքը հաղթակում և հետագալում, թեկուզ այլ ձևով: Արիստոփանը չըսընալից: Սոկրատեսն իսկապես կործանում եր իր ժողովրդի հին բարքերը: Յել չի կարելի մեղագրել այդ ժողովրդին, յեթե նազգալով իր համար թանկագին կարգերի անկման վատնզը, մահվան դատապարտեց Սոկրատեսին: Աթենացիներն իրենց տեսակետով իրավացի ենին Ապահով Սոկրատեսն ել իրավացի յեր և



նույնիսկ ավելի, քան նրա դատավորները, վորովհեան նա հանդես լեկավ վորպես նոր, ավելի բարձր սկզբունքի ներկայացուցիչ:

Հեղեղն ուղղակի համակրում եր այդ «գոյություն ունեցող որենքները խախտողներին» և կծու ծաղրում այն խորիմաստ հռագերաններին, վորոնք ձգտում եցին պատմական մեծ գործիչների արարքները բացատրել նրանց շահագիտական, անձնական շարժափներով: Նա կատարելապես բնական եր համարում այն, վոր յեթե մի մարդ նվիրված է իր գործին, ապա այդ գործի համար կատարվող աշխատանքը նրան, ի միջի ալլոց, տալիս և և անձնական բավարարություն, վորը թերես կարելի լինի տարբարուծել յեսասիրության բոլոր տեսակների: Բայց հիմք ընդունելով այդ՝ կարծել թե որոտմական մեծ գործիչները զեկավարվել են միայն անձնական շարժառիթներով, կարող են միայն «հոգեբանական կամերդինները», վորոնց համար հերոսներ չկան վոչ թե այն պատճառով, վոր իսկապես նրանք չկան, այլ այն պատճառով, վոր այդ գնահատողները—միայն կամերդիններ են:

V

Հեղեղի երիկան մի խոշոր քալլ եր գեղի տառջ, վոր արել և փիլիսոփայությունը մարդկության բարոյական զարգացման գիտական բացատրության բնապավառում: Նրա եստելիկան ներկայացնում է վոչ պակաս խոշոր առաջադիմական քալլ գեղարվեստի եյությունն ու պատճությունն ըմբռնելու գործի մէջ: Այդ եստելիկան, հանձին Շելլինսկու, մեծ ողղեցություն և ունեցել ուստական քննադատության վրա և հենց մենակ զրանով նա արժանի յեւ սուս ընթերցողի ամենամեծ ուշադրության:

Հեղեղի եստելիկան աղդակից և նրա ամենամերձավոր փիլիսոփայական նախորդի—Շելլինգի—եստելիկային: Շելլինցն ասում եր, թե գեղեցիկն անսահմանն է, արտահայտված սահմանափակ ձևով: Յեղ վորովհեան բանաստեղծութեն ստեղծագործող յերեկայությունը պայմանավորված է աշխարհի զարգացման ժամանակաշրջաններով, ապա արվեստը յենթարկված է որինահարմար և անհրաժեշտ զարգացման, վորի պատկերացումը—Շելլինցն ասում եր—կառուցնմբ—կազմում է եստելիկայի խընդիրը: Եստելիկայի առաջ գնել այսպիսի մի խնդիր, նշանակում աղդաբարել վեղարվեստի պատճության գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը: Ինարկե, տարածությունը ենթակա առաջարկությունը:

la coupe et les lèvres (բաժակի և շրթունքների միջև) յերբեմն շատ մեծ ե լինում: Մի բան և վորոշ խնդիր դնելը, իսկ այլ բան՝ նրան լրացնելը: Բայց պատճ և ասել, վոր գիտական խնդիրները չեն լուծվում «կառուցման» միջոցով, իսկ առանց դրան դժվար յեւ լուծվում «կառուցման» միջոցով: Բայց, համենայն գեպս, եր փիլիսոփայիդեալիստների գործը: Բայց, համենայն գեպս, Շելլինգին և պատկանում ճշշտ հարցադրման անմոռանալի յերախտիքը:

Բացի դրանից գեղեցկությունը սահմանել վորպես անսահմանի արտահայտություն սահմանափակ ձևով, նշանակում եր ցույց տալ վոր գեղարվեստական յերկի մեջ ըովանդակությունը մի անհան բան չե, այլ ընդհակառակը, մեծ կարևորություն ունի: Յեղ ընդհանրապես Շելլինգի տեսակետից բոլորովին անիմուս եր գառնում ձեվը բավանդակուրյան հակադրելը: Շելլինցը պնդում եր, թե ձեվը չի կարող առանց բավանդակուրյան գոյություն անենալ, վորովինել նա վորուվում է բավանդակուրյամբ: Գեղարվեստական յերկը գոյություն ունի միայն ինքը իր համար: Գեղարվեստը սուրբ և հենց այն պատճառով, վոր նրա ստեղծագործությունները չեն ծագում վորեն իր համար կողման նողատակների, որինակի զգայական հաճույքի, կամ տնտեսական ողափոխությունը կամ մարդկանց բարոյական բարելավման, կամ նրանց լուսավորության համար: Առվեսը գոյուրյուն ունի արվեսի համար: Շելլինցի այս միտքը հիացմանքով կրկնում եյին ընդհանրապես բոլոր և մասնավորապես մեր սուսական շելլինգյանները: Վորոշ իմաստով նրանք միանգամայն իրավացի եյին: Բայց յեթե արվեստի արտադրությունները կազմում են անսահմանի սահմանափակ արտահայտությունը, իսկ նրա եվլոյսցիան վորոշվում է աշխարհի եվլոյսցիայով, ապա պարզ է, վոր ամեն մի տվյալ պատճական զարգարչանի արվեստի բովանդակությունը կազմում է այն, ինչ վոր յեղել և ամենից կարևոր այդ տարարջանի մարդկանց համար:

Շելլինցի եստելիկայի հիմնական միտքը Հեղեղը հիմնավորել և ավելի խորունկ և մշակել անհամեմատ ավելի ճարտարարաբար:

Մենք արդեն գիտենք, վոր վոգին, վորին վորպես վերջին ինստանցիայի մշակապես զիմում և Հեղեղը, անփոփոխ ու անշարժ սուբստանցիա չե, նա շարժվում է, նա զարդարում է, նա տարբերվում է ինքն իր մեջ, նա արտահայտվում է բնության մեջ, պետության մեջ, համաշխարհային պատմության մեջ: Նրա մշտանշենական շարժ-

ման նպատակը ավելի ճիշտ կլինի ասել ուստիր—ինքնանանաչությունն է: Վոգուր բանը հենց այն է, վոր նա ճանաչի ինքն իրեն: Նրա ինքնանանաչության այս ձգտումն իրականանում է մարդկության հոգեվոր զարգացման պրոցեսի մեջ, իսկ այդ զարգացումն արտահայտվում է արվեստի, կրոնի և փիլիսոփայության մեջ: Յուր սեփական եյությունն ազատորեն մտահայող (հույսություն) գոգին գեղեցիկն է կամ եսեմիկական արվեստը. այս եյությունն ակնածանքով իրեն պատկերացնող գոգին կրոնն է. վերջապես նրան նանաչող գոգին փիլիսոփայությունն է:

Արվեստը գորոշել գորպես գոգու ազատ մտահայցությունն իր եյության, կարեռ և այն պատճառով, վոր ստվերարկում և գեղարվեստական ստեղծագործության և հաճույքի բնագավառի միակատար անկախությունը: Բայց Հեգելի, ինչպես և ըստ Շերլինդի ու Կանտի, արվեստի արտադրությունները գոյություն ունեն և պետք է գոյություն ունենան վոչ կողմնակի վորնե: Նպատակի համար: «Գեղեցիկի մտահայցողությունն—ասում է Հեգելը—ազատամիտ և (ist liberaler Art). Նա առարկաները իրենց կամքին և թողնում, վորպես ինքնին աղատ ու անսահման, յերույթներ, չճգտելով տիրելու նրանց ևնրանցից ոգտվելու, վորպես վախճանական կարիքների ու մտադրությունների համար ոգտակալ բաներից»: Միտամանակ արվեստը սահմանել վորպես մի բնագավառ, վորտեղ գոգին մտահայում և (հույսության համար) առարկաները: Դրանով ստվերարկում և գեղարվեստական յերկերի բավանդակուրյան հսկայական արժեքը Փիլիսոփայությունը գործ ունի ճշմարտության հետ: Նրա հետ ել գործ ունի և արվեստը: Բայց մինչեւ փիլիսոփայան ճանաչում և ճշմարտությունը հասկացողարյան մեջ, արվեստագետը մտահայում է նրան պատկերի մեջ: *) Իսկ վորովհետև մենք արգեն գիտենք, վոր նօմարիտը («բանականը») իրական է, ապա կարող ենք ասել, թե արվեստի բովանդակությունը հենց իրականություն է կազմում: Բայց, այդպես ստելով, մենք պարտակնոր ենք իրենք, վոր ամեն գոյություն ունեցող յերեւյթ ամեններն ել իրական չեն: Ինչպես նկատում է Հեգելը, սիսալ կլիներ կարծեր, թե գեղարվեստական արտադրությունը արվեստագետին արված իրք պարզ վերաբարդությունն է, միայն գեղեցկացրած ձեռվ, թե

*) Դրա համեմատ Հեգելը գեղեցիկ և անվանում գաղափարի զգայական արտահայտությունը:

արվեստագետի իդեալը գոյություն՝ ունեցող յերևույթի նկատմամբ ունի այնպիսի հարաբերություն, ինչպես մի դիմանկար, վորի մեջ նկարէւը շոյել և բնագիրը: Գեղարվեստական իդեալը իրականություն այն տարբերից, վորոնք անխուսափելի յեն ամեն մի սահմանափակ գոյության մեջ: Արվեստը, ինչպես ասում է Հեգելը, ներդաշնակ և յությունն անդամականությամբ և առորյա կեցության արդյունդագրաված իրերը նրանց հասկացողության հետ, դենք արտապարզված իրերը նրանց հասկացողության հետ, դենք անտելով այն ամենը, ինչ վոր անհամապատասխան և նրան:

Հենց այդ դեն նստելու միջոցով ել ստեղծվում է գեղարվեստական իդեալը: Այդ պատճառով Հեգելն ասում եր, թե գեղարվեստական իդեալը իրականությունն է՝ իր ուժի ամրով միակատարությամբ:

Մարդկության պատճական զարգացման մեջ յեղել է յերեք գլխավոր աստիճան, արևելյան աշխարհ, հին (անտիկ) աշխարհ և գեղարվեստական կամ գերմանական աշխարհը: Յեվ վարչովինեւե պատճական զարգացման ստիճաններին համապատասխանում են գեղարվեստական իդեալի զարգացման ստիճաններանում: Են գեղարվեստական իդեալը վարչովինները նույնպես հաշվում եր իրեքը: Այս Հեգելը այդ վերջինները արվեստը կրում է սիմվոլիկ բնույթը.

Պրեկան աշխարհի արվեստը կրում է սիմվոլիկ բնույթը: Պաղափարը նրա մեջ շաղկապվում է նույթական առարկայի հետ, բայց նրան տակավին չի տողորում իրենով: Ըստ այնմ նա իրաքը մնում է անորոշ: Դաղափարը վորոշվում է և առարկան տողորում իրենով միայն հին աշխարհի արվեստի, ուրիշ խոսքով, դասական արվեստի մեջ: Գեղարվեստական իդեալը նրա մեջ հանապատ արվեստի մեջ: Գեղարվեստական իդեալի արդպիսի մարդին և գալիք մարդկային կերպարանքով: Իդեալի արդպիսի մարդին և գալիք մարդկային միայն մարդկային մարդինը վորովհետև միայն մարդկային մարդինը արարող և զոգու համար ծառայել վորպես համապատասխան զգացական ձև: Դրանից ել դասական արվեստը հանդիսանում է գեղեցկության թագավորություն: «Ավելի մեծ գեղեցկություն չի կարող լինել և չի լինելու»—հիացմունքով ասում է Հեգելը: Բայց յերեր հին աշխարհն ապրեց իր ժամանակը, ծագեց նոր աշխարհայցք՝ իսկ նրա հետ և նոր գեղարվեստական, —ուժանտիկան, —իդեալը նոր աշխարհայցքը կայանում եր նրանում, վոր գոգին իր նպատակը վնասում եր վոչ թե իրենից գուրս, այլ

միայն իր մեջ: Խումանտիկական արվեստի մեջ գաղափարն սկսեց գերակշռել զգայական ձևին: Այդ պատճառով արտաքին գեղեցկությունն սկսեց նրա մեջ խաղալ ստորագաս դեր, իսկ զլիափոր նշանակությունն ստացավ հոգմոր գեղեցկությունը: Համենայն դեպք գրա շնորհիլ արվեստը լեռնան հանեց ձգտումն գուրս դառն իր սահմաններից և թեկակոխելու կրոնի բնագավառը:

Ըստ Հեղելի սիմվոլիկ արվեստ ե, առավելապես, ճարտարապետությունը, մինչդեռ բանդակագործությունը դասական արվեստ ե, իսկ Եկարտուրյունը, յերածուրյունը յև բանասեղծությունը դամանտիկական արվեստներ են:

Մենք տեսնում ենք, թե Հեղելի եռտետիկան վորպիսի տեսական սերտ առընչություն ունի նրա պամափիլիսոփայության հետ: Թե այստեղ և թե այնտեղ—միևնույն մեթոդը և միևնույն յելակետն ե—զարգացման հիմնական սկանառ ազդարարվում և փողու շարժումը: Այստեղից ել առաջ և գալիս յերկու բնագավառում ել միևնույն թերությունը. զարգացման ընթացքն իրեն վորպու շարժման հետևանք պատկերացնելու համար յերբեմն կարիք ել լինում քմահամորեն վարվելու տվյալների հետ: Բայց Հեղելի թե այստեղ և թե այստեղ լեռնան և հանում զարմանալի խորամտություն: Բացի գրանից եռտետիկայի մեջ ել նա հայացքով իջնում և «պատմական կոնկրետ հողի վրա»*) և այն ժամանակ արվեստի եփոյուցիայի մասին արված նրա նկատառությունը իսկապես դառնում են լուսակիր (СВЕТОНОСНЫИМ): Դժբախտաբար տեղի սղությունը թուզ չի տալիս ինձ օրինակներսի հաստատելու այդ: Սակայն և այնպես մատնացուց կանեմ այն հիմնալի ենքը, վոր մեր մտածողը նվիրում և XVII դարի հոլանդական նկարչության պատմության:**)

VI

Կեղեցիկ արվեստ ծնունդ և առնում շնորհիլ այն հանդամանքի, վոր վողին ազատորն մտահայում ի իր եյությունը: Իսկ

*) Մրանք նրա նեփական խոսքերն են:

**) Տես Կրա Vorlesungen über die Ästhetik, համ. I, եջ 217. 218.

Համ. II, եջ 217—233: Ուսանելի կինոն համեմատել Հեղելի՝ այստեղ ասածն այն բանի հետ, ինչ վոր Ֆրումանտենն ի ասում «Les maîtres d'autrefois» հայտնի գրքում նուանդական դարսցի ծագման և բնույթի մասին: Ֆրումանտենի հիմնական միտքը, թե նուանդական նուանդությունը յեղել է նուանդական բուժուազիայի դիմանկարը՝ այդ բուժուազիայի զարգացման վորոշ աստիճաններին միանգամայն համապատասխանում և Հեղելի հայացքն:

կրոնը իր ծագումը պարտական և այն բանին, վոր վողին պատկերացնում ել իրեն այս եյությունը: Այսպես եր ուսուցանում Հեղելը: Բայց կարելի յե արդյոք բաժանել պատկերացման և մտահայեցողության բնագավառները: Յեթե կարելի ել լինի, համենայն դեպք դժվարությամբ, վարովինեաւ իւրի մենք պատկերացնում ենք մեզ ավել առարկան, ապա միաժամանակ և մտահայում ենք այն ավել առարկան, ապա միաժամանակ և մտահայում ենք այլ կողմից նաև առարկայի վրա:

Ըստ Հեղելի՝ վողին զանվում ե մշտական շարժման պրացեսի մեջ: Նրա ուրծման պրոցեսը նրա ինքնան այնաբերեման (օսմօրակրիտիա) պրոցեսն է: Վողին իրեն հայտաբերում ե ընության, հապարակական կյանքի, համաշխարհային պատմության մեջ: Յեթե ինքնան այսաբերումը կատարվում է ժամանակի ու տարածության մեջ: Այսպիսով վողու անսահման հզորությունը յերեվան և զայն սանմանական ձևությունը կատարելու կամաց առաջարկային կամաց առաջարկային առաջարկային պատկերացման մարդը աստծությունը կատարելու վայրէ միաժամանակ համար կապված մի կերմարդկային, վորպես վայրմանական սուրբեկայից կատարելու անկախ, բայց միաժամանակ նրա հետ սերտ կապված մի լապես անկախ, բայց վողին այստեղ ել մշտակես միահետեւ չե բացվում նրան: Վողու պատկերացումը, վորպես վերմարդկային եւակի պատկերացում, փոփոխվում ե, —զարգանում—մարդկության պատմական զարգացման ընթացքին զուգահետո: Արևելքը պատկերացնում և աստծուն վորպես ընության բացարձակ մի ուժ կամ ուղարկանցիա, վորի հանդեպ մարդը գիտակցում ե իրեն իրեն մի վոշնչություն և անազատ եյակը Հետեղալ աստիճանի վրա աստված պատկերացում և վորպես սուրբեկի: Վերջապես քրիստոնեյությունը, վորին Հեղելը ճանաչում է բացարձակ կրօն, ազդարարուազիայի պատման համապատասխան անպայման միասնականություն և անշտացումն: Այդ կրոնի կենտրոնը կազմում է Քրիստոս, վորպես

աշխարհի փրկիչ, վորպես աստծու վորդի և, վոր գլխավորն ե, վորպես աստվածամարդ:

Ահա թե ինչ են նշանակում—կրոնը իսկական ըովանդակությունն ե պատկերացման ձևով—բառերը: Բայց այդ ձեզ տակավին բացարձակ ճշմարտության լիակատար արտահայտությունը չե: Իր լիակատար արտահայտությունը միայն փիլիսոփայության մեջ ե գտնում այդ ճշմարտությունը: Պատկերացումը պահպանում ե պատկերավոր արտահայտություններ և նրանց համարում եյական: Նա խոսում է աստվածային բարիության, աստծու վորդու ծննդյան մասին և այլն: Հեղելը յեռանդուն պաշտպանում եր քրիստոնելության «ներքին ճշմարտությունը», բայց նա հնավոր չեր համարում հավատալ աստվածաշնչի այն պատմածքների արժանահավատության, վորոնք աստվածային գործողությունները պատկերացնում են իրեն պատմական դեպքեր: Նա ասում եր, թե նրանց պետք ե քննության առնել վորպես ճշմարտության այլարանական նկարագրություն, ինչպես Պլատոնի մութերը (առասպելները):^{*)} Հեղելի փիլիսոփայությունը թշնամական վերաբերմունք ուներ դեպի սուրբի կամաց կանուքները: Այդ փիլիսոփայության տեսակետից տվյալ անձնավորության իդեալն արժեք ունի միայն այն ժամանակ, երբ նրա մեջ արտահայտություն ե գտնում համաշխարհային վոգու շարժմամբ պայմանավորված հասարակական զարգացման որևէկարիվ ընթացքը: Այդ հերոսները, վորոնց մասին այնպես համակրանքով խոսում ե Հեղելը, այդ զարգացման գործիք են ծառալել: Յեզ նրա փիլիսոփայությունը հենց միայն այն պատճառով տեղ չեր թողնում ուսուփիմի համար: Բայցի դրանից ուսուփիմի հետ նա անկարող եր հաշտվել նաև այդ պատճառով, վոր գիտելիստիկայի լուսի տակ կորցնում ե իր ամեն մի իմաստը, ուսուփիմի համար ընորոշ համոզմունքը՝ լավագույն հասարակարգի պլան հնարելու համարվորության մասին: Յեթե ամեն ինչ կախված ե ժամանակի ու տեղի հանդամանքներից, յեթե ամեն ինչ հարաբերական ե, յեթե ամեն ինչ հոսում ե և ամեն ինչ փոփոխվում, ապա մի բան կա միայն, վոր զուրս ե տարակուսից—հասարակարգը փոփոխվում և համաձայն այն հասարակական հարաբերություն-

^{*)} Կրոնական պատմվածքները առասպել ընդունելու հայացը արտահայտել եր զեռ Շելլինգը՝ «Քրիստոս, —առում ե Շելլինգը—պատմական մի անձնագործյուն ե, վորի կենսագրությունը զբել ե արդեն նրա ծննդից առաջ» («Կոն Փիշեր Շելլինց» ԸΠΓ, եջ 768):

